

# ՏԱՐԷԳԻՐՔ ՀԱՅՈՑ

Ի Լ Ա Խ Ա Ց Ե Ի Օ Լ Ա Խ Ա Ց Ե Ր Կ Ր Ի



(Տես յ'էջ 442)

ԿՈՆՏԱԿ ԹԷՌՆՈՐՈՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ, 18 ՕԿՏՈՍ. 1389



Մ Յ Ս մեր գիր հոգեւորական բարձր հրամանի հաստատութիւն է և արհեստագործութիւն թէ՛ ողորոսի ծառայի ծառայիցն Քրիստոսի Տեառն մերոյ. Շնորհաւք և ողորմութեամբ նորին եպիսկոպոսապետի Մեծաց Հայոց և պատրիարզի ամենայն Արեւելից<sup>1</sup>. Չոր արհեստագործութեամբ և հայրական հոգեբարձութեան գթով՝ գրեմք ի յամէնօրհնեալ և յաստուածապահ յանուանի և յականաւոր թագաւորանիստ քրիստոսական մայրաքաղաքն ի Լոմֆ և յամենայն վիճակն իւր բոլորովին. ի Սերաթն, ի Չիչոմն, ի Կամենեցն, ի Լուցկայն, ի Սուլատմուրն, ի Մանքուման, ի Վլլախաց երկիրն և ի Պտինն, ի յՈւնկիսալայն, և ի յայլ ամենայն թէ՛մն իւր առ հասարակ. Մեր ի Քրիստոս Աստուած հաւատարիմ ըստ հոգոյ յոյժ սիրեցեալ ցանկալի և պարծանաց որդւոցդ. Պատվական՝ և սրբասէր քահանայիցդ, աստուածասէր և բարեպաշտ Պարոնացդ և ավագաւորացդ, փառաւոր խաւճանոյդ և Պուռճէմնոյդ<sup>2</sup>, իմաստուն վաճառականացդ, Հարկեւոր և բարեգործ տանտւորացդ, ձեռնահմուտ արուեստագետացդ, աշխատասէր հողագործացդ. և ամենայն Հայասեռ և քրիստոսագաւան մերոց ժողովրդականացդ, արանց և կանաց, ծերոց և տղաոց, երիտասարդաց<sup>3</sup> և կուսից, մեծամեծաց և փոքրոցնց, և ամենայն չափո հասակի: Որոց այդոցիկ ամենեցուն

1. Շատ մեծ և նշանաւոր աթողոս, չգիտեմ թէ մեր շուրջ կաթողիկոսք այլ գործածած են զայս, ըստ ոմանց ստորի կամ քաղաքացի պատրիարքաց, որք յԱնտիոք նստելով՝ գիրենք Արեւելից պատրիարք կ'անուանէին. իբր զի քանի որ ի սիզբան միայն երեք էին պատրիարքուոց, Հռովմայ, Ալեքսանդրիոյ և Անտիոքայ, սա Ասիոյ կամ Արեւելից կկեղեցական գլուխն էր. երբ շտաբան պատրիարքուոց անհամաձայնք ի գաւանդութեան, ամեն յԱնտիոք նստողք՝ այն նախահան տրուան այլ իրենց սեփականեցին, այդ մեծ և ընդարձակ կուլմաք ավանքն Արեւելից: Հայաստան այլ ըստ ՚ին երեք բաժանման աթողոսն՝ Անտիոքայ պատրիարքութեան վերաբերեալ էր. երբ իկանազուրկ եղաւ նման ուրիշներու, թուի թէ թէ՛ ողորոս օրինաւոր անմարած է զինքն այլ այնպէս կուլի. կամ թողուլ որ իր գլխին կամ կոնդակաւքի այնպէս զբէ թ սիզբան, բայց ինքն իր յատուկ ձեռք աստուաբան է կաթողիկոս ավանքն Հայոց, որպէս էր, և ոչ ավանքն արեւելից, որոց չէր:

2. Ի՞նչու Հայոց Կիլիկիոյ Ռուբինեան կարտութեան շուրջ կայ, կապի երկվեցեակ տարի անցեր էր անբուժեան վերջնապէն, և զեռ ողջ էր Լեւոն Ե. անոնց քաղաքական ընկերութեան արեւմտայն նմանողութեան նմալի մ՝ և այդ Պարթեւաք (Bourgeois) յոգնաբար Պարթեւի:

ի միասին առ հասարակ մեծով փափուքմամբ կարողութեամբն Աստուծոյ Հաւր, զարուծեամբ Որդւոյն միածնի Յիսուսի Քրիստոսի, ի ձեռն Հոգւոյն Սրբոյ, առաքեմբ ողոյն սիրո ի մէջն և արհնութիւն առաքելական. ի յաստուածքնկալ սուրբ Նշանէս Վանկկոյ, և ի շնորհաբաշխ Աշոյս մեր Սուրբ Լուսաւորչին Գրիգորի, և յերկնահանգէտ սուրբ աթոռոյս առաքելական. Որոց արագահասս սքանչելագործ կարող զարուծեամբն և արհնութեամբն՝ պահպանեալ փրկեալիք յամենայն վտանգից փորձանաց հոգւոյ և մարմնոյ, տամբ և որդովք, և ամենայն գոհւք. ամէն:

Գիտութիւն լիցի ձեզ ամենեցուն, սիրելի որդիք մեր ի Քրիստոս, բազմաչարչար երկամբք ծնունդք աւետարանապէն ի Քրիստոս Աստուած Սրբոյն Գրիգորի, զի ըստ հայրական ջերմն սիրո մեր զոր ունիմք ի վերա ձեր, հանապազ հոք մեր դուք էք ի Տէր, եթէ ճրպէս կամ զխարզ էք ի ժամանակիս չար բերմանց ներքուստ և արտաքուստ ներհակաց. զոր և աղաւթիք հայցեմք յԱստուծոյ և ի մեր Սուրբ Լուսաւորչէն, պահել զձեզ խաղաղութեամբ հոգւոյ և մարմնոյ առողջութեամբ և ամենայն բարութեամբ. Եւ այլ ծանիք մեր ըստ հոգւոյ որդիք, զի այդ Գրիգոր ասացեալ չեպիսկոպոսդ որ ի Լովդ, դարանակալ նստի, նա ի մեր նախնեացն ժամանակն ի Քրիստոս հանգուցելոցն՝ ի Տէր Մեսրապա և ի Տէր Կոստանդիա, բազում անսահման բաներ գործեաց. զի առանց իր ձեռնադրողին հրամանաց՝ յայլոց վիճակ կու ձեռնարկէր, և ամբարտաւանութեամբ կու գնայր. յաղագս որո բազում խրատական գրեր առաքեաց առ նա, և նա ոչ սգաստացաւ: Յետ այնորիկ վաղջանեցաւ Տէր Մեսրովք, և հաստատեցաւ Տէր Կոստանդին. Իսկ այդ ասացեալ չեպիսկոպոսդ Գրիգորդ՝ ևս առաւել յաճախեաց ի յանուղղեա վարս իւր. որ և եհաս համբով չարութեան նորա առ Տէր Կոստանդին. որ և յոյժ վիրաւորեցաւ նմայ. սակայն ներեաց, թերևս յուղութիւն դարձցի: Ապա յետ այնորիկ ել և եկն ասացեալ չեպիսկոպոսդ՝ առ Տէր Կոստանդին. և այնպէս երևեցոյց զինքն Կաթողիկոսի, որպէս ասէ Քրիստոս, եթէ Փայցեն առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, և ի ներքո են քայլք յափշտակողք. Նայ այնպէս արար. զի սուտ խոնարհութեամբ և սնտապատիր խարէութեամբ պատրեաց զմեր նախնին, և կրկին էառ շրջաբերական Լովին: Իսկ յետ սակաւ աւուրց իմացաւ Տէր Կոստանդին զնորա անուղղեա գործերն, և ծանեաւ ըզնայ որպէս ասէ Քրիստոս, եթէ ի պտղո նոցա ծանիլիք զնոսա: Յըզեաց մարդ ըզհետ նորա մինչև ի Վահկայն, և ետ առնուլ ի նմանէ ըզշրջաբերականն և զամենայն գրերսն, և գնա հերքեցին: Իսկ այտ չարեաց արմատ ասացեալ չեպիսկոպոսդ՝ եկն դարձեալ ի քաղաքն. և զերկաթն՝ զոր սպունկանաւ՝ ծածկեալ ունէր նա ի գործ չարութեան, էած. զի գնաց յարեցաւ յիշխանսն, և կաշառս ետ նոցա, որ եկին իշխանութեամբ զկաթողիկոս ի կամաց հանին, և առին դմա շրջաբերական. զի ընդ այն ժամանակն իշխանքն յերկուս են բաժանել, նա երկեաւ զի մի պատճառ չարեաց լինիցի. և այնր աղազաւ ետ այդ ասացելոյդ շըր-

1. Մութ և անտղոր բառի ըստած. Սղոսիանն՝ Թուի իմն Թէ ոչ սպունդ՝ այլ պատեաք նշանակէ, որոյ մէջ ծածկեր եր չարութեան կամ կարելու գործիք երկաթք. այսպէս գուշակել ապ և հին բովարտանի մէջ Սղոսիան գրուածն, ներքին վերաց դարմանի նամար, և գործն խարձէ սպունկեալով: Իսկ Քիմիագիրքն՝ աւելի սպունդի կարծիք ապ, ըսելով. «Փոշովեցի Սպունգառով կամ փետրով»:

լարերական: Յիտ այնորիկ մեր նախնին Տէր Կոստանին գրեաց ասացեալ Գրիգոր չեպիսկոպոսիդ՝ զիր բանադրանաց, որ առաւել հատու էր քսն ըզսուսեր երկսոցրի, որ մինչեւ ի պակասել շնչոյն հատանէ. և արգելեաց զինքն գտասցեալ Գրիգորն ի յեւթն խորհրոցոց Սուրբ եկեղեցոյ, և կապեաց ընդ անիծուք զինքն և զիր համախոհքն. և հրամայեաց ամենեցուն՝ որ զնա ամենեւին կարգաւոր շընդունին: Ապա լուսեալ զգլխովին շարն գորարար, զի կամեցաւ այդ ասացեալ չեպիսկոպոսիդ գթադարացիք՝ զոմանս խաւաք ի թագաւորական ցառուսն արկանել. և յոյժ վիրաւորեցաւ, և խորհէր թէ որպէս բնախնշ արասցէ ըզնա այդի. և զեռ ևս ի սոյն խորհրդեան էր, նա եկն Տէր Յոհաննես Ար. Նասրատնին որդին՝ վասն եպիսկոպոսութեան այլո վիճակի՝. զոր իբրև ետես դաս՝ յոյժ ուրախացաւ, և ձեռնադրեաց զՏէր Յոհաննէսը՝ Լովորդ, և ամենայն վերայ յիշեալ թէմիդ եպիսկոպոս, և առաքեաց զալ առ ձեզ: Սակայն յետ աւուրց ինչ եհաս վաղջան մեր նախնոյն և փոխեցաւ յաշխարհէս. և կումուսքն Աստուծոյ և ընդրութեամբ նորին՝ հաստատեցաք ի սուրբ աթոռս և մեք կաթողիկոս աւմենայն Հայոց: Եւ ընդ աւուրսն ընդ այնսոսիկ հանգիպեցան առ մեզ երկու եղբայր ի Լովէդ, տանուտէլք, Ումէա և Անպէտ անուն՝. մեք արարաք այտ ասացեալ Գրիգորիդ խնամք, և գրեցաք յինքն, թէ Ե՛լ և արեկ ի յաթոռս, որ ի յաթոռոյս շնորհացն ի քեզ հասանի. նայ զմեր հրամանքն ոչ ընկալաւ, և ոչ առ մեզ եկն: Յետ այնորիկ և մեք առաքեցաք նվիրակ ի Լովդ. նա այդ ասացեալ չեպիսկոպոսիդ՝ զմեր նվիրակն չէր ընդունել, և ոչ յեկեղեցի թողել էր որ մտել էր: Կրկին առաքեցաք զնվիրակն. նայ ի սաղրելոյ նորս պայման մեր նվիրակն. և մեր զրեքն առ ինքն գտեալ եղև. և երևեցաւ որ ինքն էր դարան գործել: Եւ պատճառ մի այլ ևս գործեաց ընդդէմ կանու նաց. զի ըզմեր կընքեալ զիրն բացեալ և կարդացեալ, և ապա յայտնեաց. որ և մեծ պատժոյ արժանի է. և զայն ևս ներեցաք. և առաքեցաք զՎարդան երեց նվիրակ ի Լովդ, և կոչեցաք զինքն առ մեզ: Եւս այսպանի ժամանակ զՔրիստոսի արեամբ զնեալ ժողովրդեանդ զպարզքն առեալ էր, և սակաւ ինչ ի ձեր պարզեւացն տուել էր ի նվիրակն. և յետոյ բրնձութեամբ յետ կամեցաւ առնուլ, և աղմուկ էր արարել հետ մեր նվիրակին: Եւ մինչ մեր նուիրակն ի յառ ձեզ էր, նա եկն Տէր Յոհաննէս և կու զնայր յԵրուսաղէմ. մեք հրամայեցաք, թէ յորժամ դարձցիս յԵրուսաղէմայ՝ նայ առ մեզ եկն. զի զբել եմք որ այն ասացեալ Գրիգորն գոյցէ, որ ձեզ դատաւտան րանեմք՝: Իսկ Տէր Յոհաննէսս զարձաւ յԵրուսաղէմայ և եկն առ մեզ, և կացաւ բազում ժամանակ ի մեր գուռս. մինչև եհաս առ մեզ մեր նվիրակին զիրն, թէ զայս ինչ արար հետ մեզ, և ինքն չէ ի գալ: Մեք ծաւնեաք զայդ Գրիգոր չեպիսկոպոսիդ զամբարտաւանութիւնն, որ մեր սուրբ

1. Ասա խօսքես և վերջ Գրիգորի համար ըսածէն, թէ՛ « յայլոց վիճակ կու ձեռնադրէք », զուշակուի թէ այս մեր արեւմտեայ գաղթականաց երկիրներում՝ Լովէն զատ ուրիշ եպիսկոպոսական աթոռք այլ կային՝ այն ժամանակ, ինչպէս ի Ռուսաց նահանգս, ի Քրիւ, Սէրայ, Ամաթրեան, և յԱւստրալիական կայսերութեան՝ ի Թուրմաք Ունգարիոյ: Ի ՓՁ և ՓԵ դարս յԵւրոպէն եպիսկոպոսք, նա և ի Ռումանիա, ըսցյ այս Թ՛Կ դարու՝ ոչ, կամ մեզ ծանօթ չեն:

2. Ասոնք զայնէն ի Սիմ՝ քն՝ օգուռ կամ առիթ՝ գտաւ կաթողիկոսն, ըսէր. ըսցյ կ'իմացուի որ նոր սեղեկութիւններ առաւ:

3. Յայտնի ուրեմն որ երկու եպիսկոպոսքն հին և նոր՝ վիճէին ի վերայ աթոռոյն, և ժողովուրդն այլ երկպառակէր:


աթոռոյս զլուխ է վերուցել, և ըստ արժանաց իւրոց պատժեցաք զինք, ըստ ասացելոյն, եթէ զլարսն չարաւ կորուսցէ, և զայգին տացէ այլոց մը շակաց՝ որ արասցէ զկամս նորա. նոյնպէս և մեք արաք<sup>1</sup>. և վերըստին հաստատեցաք զՏէր Յոհանէսոյ ձեզ եպիսկոպոս, որպէս մեր նախնին հաստատել էր. և պարգևեցաք զԼուսին իւր վիճակովն, և զԼուցկայն, և զայլ ամենայն թէմն զոր վերոյ յիշեալ ենք, Տէր Յոհանէսոյ թէմ և վիճակ, աթոռ և հանգստեան տեղի: Եւ առաքեցաք զբաւարական արհնութեամբս մերով զալ առ ձեզ. և առաքելարար շրջեսցի ի միջի ձերում, վարդապետել, խրատել և ուսուցանել յաւրէնս և ի պատուիրանս Տեառն, կալ անարատութեամբ ի տուէ և ի գիրերի. տալով զանձն աւրինակ բարեաց ձեզ ամենեցուն. ինքն արասցէ և ըզձեզ ուսուցէ սբբութեամբ արդարութեամբ, երկիրչիւ, սիրովն առ Աստուած և առ ընկերս. եղբայրսիրութեամբ աղքատսիրութեամբ, ողորմածութեամբ և աղաւթիւք, լինել այցելու որոց և այրեաց, և ամենայն կարօտելոց կարեկից, սիրովն Քրիստոսի: Կոչեսցէ զարժանաւորսն և ըզվկանալսն ի կարգ և յաստիճան կեսսարկավագութեան, սարկավագութեան և քահանայութեան: Կայցի և հրամանալս մեր ի վերս ձեր իշխանութիւն առաքելական, կապել և արձակել յերկինս և յերկրի. զմեղուցեալսն և զապշտամբեալսն յարինացն Աստուծոյ և ի կանոնաց սըրբոց հարցն, կշտամբել և յանդիմանել, և ըզզղջնացեալսն ընդունել ապաշխարութեամբ: Որով և զուք ամենեքեան առ ի դմանէ հովեալք և արածեալքն ի վայրս դալարով առաքելութեան և ի Լուր հանգըստեան պատուիրանացն Աստուծոյ, զաստուածապատիւ և զառաքելաշնորհ յոյժ սբբազան արքեպիսկոպոսոյ ձեր զՏէր Յոհանէսոյ, զսիրելի և զհաւատարիմ որդիս մեր՝ մեծով պատվով և յոյժ սիրով ընկալարուք, որպէս զհրեշտակ Աստուծոյ և որպէս զառաքելական այլ: Ձի հրամանալս մեր դա Տէր Յոհանէսոս՝ է ձեզ եպիսկոպոս. որպէս մեր նախնին հաստատեաց, և որպէս նա պարգևեաց յանժամ, նոյնպէս և մեք հաստատեցաք այժմն, և է և եղիցի: Իուք ամենեքեան սիրելի որդիք մեր ի Քրիստոս, ամենայն հոգևորական խրատո զորա՝ որ ի շահ և յաւգուտ է ոչւոց ձերոց, հնազանդութեամբ ունկնդիր լիւրուք: Այլ և զամենայն կանոնեալ հաս և զիրաւունք՝ զոր պարտիք տալ Աստուծոյ բաժին աթոռո, զհաս տանց քահանայից և զամենայն ընդանեաց նոցա, զերախայրիս կալոց և զհրճմանաց, զՏեառնականս և զսբբանուէրս, զիրաւունս մատաղաց կենդանեացն և զյանկարծամահից, և զամենայն իրաւունս կենաց և մահու, լիով անթերի տուք ի ձեռս զորայ, զուարթ և առատ սրտիւ. որպէս զի գտուրս զուարթաւատս սիրէ Աստուած: Եւ մի ոք իշխեսցէ հակառակիլ ամա կամ հրամանիս մեր, և արգելցէ յիրաւանց տալ կամ խորեացէ, կամ յազգ անկանի և ուժ հասուցանէ Տէր Յոհանէսոս. զի որ ոք որ հակառակ լիցի սմայ, նայ այնպիսի առցէ յԱստուծոյ զանձնս Կաննի, զմասն Յուդաի և զիսաչաւանուացն: Որով աւրհնեալքն ի Տէր Յոհանիսէս՝ աւրհնեալ եղիցին յԱստուծոյ և ի մէնջ. կապեալքն և որոշեալքն՝ ի նմին մնացնն, մինչև զղլացիին: Վասն օրո ի մտանել զորա և աւրհնութեան հրամանիս մերոյ առ ձեզ և սուրբ մեռոնիս, իջցէ և շնորհք ողորմութեանն Աստուծոյ յերկնից ի վերայ ձեր էաւթնպատիկ, և լցուցցէ զձեզ ամենայն

1. Հետադրէր և ըսածն. քնչ կերպով արդեօք պատժեց՝ սչք ամբարտաւան և աննապանգ եպիսկոպոսը, և քնչպէս զլարսն չարաւ կորցուց:

հոգևոր և մարմնաւոր բարութեամբ. բարձցէ ի ձէնջ զամենայն ցասումն, զպատուհաս և զտարածամ մահ. տացէ ձեզ շինութիւն, անդորրութիւն և խաղաղութիւն. և ամենայն բարեաց ձեր լիութիւն և առատութիւն և աւրհ, նեցէ զձեզ զամենեսեան Քրիստոս Աստուած մեր: Շնորհեցաք ի ձեռն դորա ձեզ պարգևս հոգևորական զեղն աւժութեան զաստուածագործակ սուրբ մեռանն, ի լուսաւորութիւն նորածնելոցն աւագանաջն, յորդէգրութիւն Հաւրն երկնաւորի, և ի ժառանգակցութեան Քրիստոսի յուսոյն մերոյ. զնոյն ի նա. կատ նշան հաստատութեան յաւժումն քահանայութեան, ի նորոգութիւն սուրբ եկեղեցւոյ Քրիստոսի Աստուծոյ մերոյ, աւրհնելոյն յամենայն յաւիտեանս. ամէն:

Գրեցաւ զիր աւրհնութեան բարձր հրամանիս մեր՝ ի յլստ ի մեզ մարդեղութեանն և ծննդեանն մարմնով Քրիստոսի Աստուծոյ մերոյ ՌԳՃՂ ամի, և ի Սրբոյն Գրիգորէ ՌՂ ամի. եւ մեծ թուիս Հայոց ՊԼԷ ամի. ի մեր նըստիլս ի սուրբ աթոռս՝ որ է ամ է և ամիս ութ և աւր ԺԷ: ի յաւգոստոս ամսոյ ԺԸ. ի փառս Քրիստոսի: Էւ վասն առաւել հաստատութեան և ախալս՝ ձեռնագրեցաք մեր սովորական կարմիր ձեռնագրովս: Կնքեցաւ վերոյ ամէներեւելի ծաղկաւետ մեծ մատանովս. կամաւք բարբրարին Աստուծոյ աւրհնելոյն ի յամենայն յաւիտեանս. ամէն:

† Թէոդորոս շնորհաւորն Աստուծոյ Կաթողիկոս ամենայն Հայոց:



## Հ Ա Յ Վ Ա Վ Ա Ն Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

(Տևս յ'էլ 445)

Ա Բ Գ Ա Ր Ե Ի Գ Ո Կ Ի Ա Յ Ի

Ժ Ա Մ Ա Գ Ի Ր Զ

**Ա**րգարեան տառիւք եղած այս տպագրութեանն՝ օրինակ մը միայն ունինք ի մեր մատենադարանի, և այն զժբաղդաբար ոչ անթերի. վասն զի զրոցը նակատը պակսելուն յօրինակին՝ ոչ տպագրութեան թուականին, և ոչ ալ ուր տպագրուած ըլլալուն որոշ տեղեկութիւն մ'ունինք, ուստի և չենք կրնար հաղորդել մեր ընթերցողաց: Միայն ի վերջ խաղաղականի՝ Շնորհատոն բարեաց աղօթիցն, մանրագիր տառիւք տող մի յիշատակարանի կը գտնենք՝ այսպէս. **Ա** զրեցաւ Աղաւթմատուցս. թոյլին. ՌԺԷ. ապրիլ ի Է:

Տպագրիտ երկայնութիւնն է 19 հարիւրորդ մ. լայնութիւնն՝ 13 հրմ. ամէն մէկ երեսին վրայ՝ տասնուհինգ տողք. ու անոնց ալ ամէն մէկուն՝ քսան ու վեցէն քսանեւութ տառք ընդհանրապէս: Գլխագիրք և կարմրագիրք ունի, թայց ոչ և խորանագարդք. զուցէ ունէր ի սկզբնաւորութեան՝ առաւօտեան ժամ երգութեան, որ մեր ձեռքն եղած օրինակին մէջ կը պակսի. զի առաջին թերթէն՝ թերթի են առաջին և ութերորդ թողթերն կամ չորս էջք:

Թուանամարք դրուած չեն ոչ ի ստորեւ և